

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

19 ԱՊՐԻԼ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթերի տարեկան բաժանորդագրեն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 ֆրանկ կամ 5 բուլղի: Թղթաստացիական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէճ է իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատուրթեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Ձեռ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطه (ماسيس) غرضه می اداره می

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՅՍ ԿԼԻՄԱՅԻ ՄԷՋ

Ընդհանուր վերտեր կան որոնք այս աշխարհածանօթ դեղով կատարելապես կը բժշկուին:



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

19

SCOTT'S EMULSION

Հաղ, հարուստ, և բոլոր որկորի և թորի վերանրինչպէս լծողացաւ, և պրօնշիտ, շնջառութեան և կուրծքի երակներուն փորփողումը և միւս տկարութիւնն պատճառող անհանգստութիւններ՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուն և վերջապէս կը բժշկուին: Կամաւ նաւանդ ծիրական ակտի նկատմամբ՝ առաջին նշաններ տեսնուած ատեն, անմիջապէս առաջըր կ'առնէ: Եւ ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք դեղարան մը զիմեւ և:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՒՆ

մը առնել: Ըսգօթի Բաղադրութիւնը այս աղետը դադրեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականրէ:

Բոլոր տեղաւորները և տեղաժամանները կը Ծախեն:

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-իւղոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ գրնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ թիւ կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵՄԱՂՐՈՒՆԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵՍՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեք եւ առողջաբար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր քսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գալիու, ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Յ. ՎԱՍԻԼԵԱՆԻ չորս տետրակներու մէջ ամփոփուած Գրավարժութեաննոր դրութիւնը հրատարակուեցաւ: Դիմել բոլոր հայ գրավաճառաց:—Դին հատին 20 փարայ:

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

19 ԱՊՐԻԼ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արհեստ եւ գիտութիւն. ՀՐ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ : — Ինչպէս կը գրեմ. ՄԱՌԻ ՅՈՎ. ՀԱՆՆԵՍԵԱՆ : — Գարնան երգեր. Մ. ԱՃԷՄԵԱՆ : — Գրախօսական. «Վաճառականի մը ուղեցոյցը». ԳՐԱԿՐԿԻՏ : — Տուայտանգ (Նորավկայ) Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ : — Ուրուագիծներ — Վայրկենական. «Մ. Անեմեան». ԳԱՄԵՐ : — Ֆրանսական Գրականութիւն. «Տղու զգայութիւններ». ԱՆՏՐԷ ԹԵՐՐԻԷ : — Խմբագրական Նօթեր :

ԱՐՅԵՍՏ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Պ. Հրանդ Անդրէասեան, ճարտարագէտ ի Պէրլին, որուն երբեմնակի յօդուածները — միշտ արհեստական ձիւղին նուիրուած — աւելորդ ու օգտակարապէս կարգացուած են Արեւելի ու Մասիսի մէջ, Խմբագրութեանն ուղղած է հետեւեալ նամակը որ թերեւս հարատարակելի հանդամանք մը չունենայ իրեն համար ու այդ նպատակով գրուած չլլայ, բայց այնքան բանաւոր թելադրութիւն մը կը պարունակէ և այնքան գործնական մտքէ մը կը բղխի, որ սիրայօժար կը հիւրընկալենք զայն : Եւ այս առթիւ, չենք վարանիր հրապարակային հրաւեր մը ուղղել՝ արհեստական ու գիտական նիւթերու վրայ գրելու ձեռնհաս գրիչներուն, — ինչպէս չենք դադրած ընելէ անհատապէս, Խմբագրական նամակներով, — այդ ձիւղերուն մշակմանը նոր զարկ մը տալու համար Մասիսի մէջ :

Եւ ուրախ պիտի ըլլայինք, եթէ յարգելի նամակագիրը առաջին օրինակը ինքն իսկ տար, իր զբաղմանց ներած չափովը ի հարկէ, վերականգնող մեր թերթին մէջ նոր շարք մը արհեստագիտական յօդուածներու, ինչ որ կը սիրենք յուսալ թէ իր հետեւողները պիտի ունենայ :

«Օգտակարը հաճելիին խառնել» — այս եղած է մեր ուղղութիւնը 1900էն ի վեր,

չանալով միշտ գրականին ու բանաստեղծականին հետ մեր ընթերցողներուն ներկայացնել՝ զխտական նօթեր, բժշկականներ և այլն : Առաջինները շատ աւելի լայն տեղ մը գրուած են սակայն. և այլապէս չէր կրնար ըլլալ գրական շարաթաթերթի մը համար :

Պ. Հր. Անդրէասեանի արտայայտած առողջ գաղափարին գտնելիք ընդունելութեանէն կը սպասենք բարերար արդիւնք մը :

Պէրլին, 20 Ապրիլ 1903

Խմբագրապետ Մասիս շարաթաթերթի
Կ. Պոլիս

Գիտական և արհեստական յօդուածներու հիւստարակութիւնները մեր թերթերուն համար հազուադէպ պարագաներ դարձած են. ասոր պատճառը կա՛մ այն է որ ընթերցողներու կողմէ խնդրանք չի կայ և կա՛մ այն՝ որ Խմբագրութիւնները անկարող են պէտք եղած մատուցումը ընելու : Իմ կարծիքովս, այս վերջին ենթադրութիւնը ձիւղ ըլլալ կը թուի, որովհետեւ մեր թերթերուն մէջ յաճախ կարելի է հանդիպիլ գրութիւններու, որոնց հեղինակները իրաւամբ ցոյց կուտան գիտական-արհեստական յօդուածներու պահանջը եւ կ'աշխատին պարզել, թէ անոնք որքան օգտակար կրնան ըլլալ հասարակու-

թեան, երբ ամէնուն հասկնալի, պարզ լեզուով մը գրուած ըլլան և մատչելի նոյն խակ հասարակ երկրագործին ու արհեստաւորին:

Բնականաբար կարելի չէ խմբագիրներէն պահանջել որ ամէն նիւթի համար կարող ըլլան հեղինակաւոր գրիչ մը գործածել. անոնք պէտք ունին մասնագէտ աշխատակիցներու, անոնց վստահելու համար գրական այս կամ այն ճիւղը վարելու, մշակելու գործը: Այսօր հրապարակին վրայ ունինք գրչի բաւականաչափ ոյժեր, որոնք բժշկական—առողջապահական հարցերու մասին կըրնան կշիռ ունեցող կարծիք մը յայտնել եւ կամ այդ ճիւղերուն վերաբերող որ և է նիւթ ձեռնհասօրէն ընդլայնել, պարզել ու ժողովրդականացնել. նոյնը կարելի է ըսել թերեւս որոշ չափով աստուածաբանական և իրաւաբանական ճիւղերու համար. բայց երբ դիտենք արհեստական և ուրիշ գիտական ճիւղերը, կը տեսնենք որ հոտ անըմբռնելի երաշտութիւն մը տիրէ: Այս երեւոյթին շարժառիթը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ մատաղ սերունդին տրուած անբաւական ու անխնամ նախակրթութիւնը: Դպրոցականները մասնաւորապէս բանաստեղծութիւնով և վէպով զբաղեցնելու միտում մը կայ մեր մէջ և այդ պատճառով այսօր երիտասարդ մը որ ընդունակ է քիչ շատ չնորձքով հայերէն մը գրելու, կարծես բնադղը ունի կա՛մ ոտանաւորով և վէպով և կա՛մ ֆրանսերէնէ անհամ նորավէպի մը թարգմանութիւնով իր գրական amateurի փափաքները գոհացնելու: Իսկ գիտական հարցերու մասին բոլորովին անտարբեր է ան ու բնաւ չի ալ փորձեր մասնաւոր ընթերցումներով գէթ ինքզինքը ընդհանուր կրթութեան պահանջած զարգացման աստիճանին վրայ դնել: Ընդհանուր կրթութեան պարտաւորեցուցած գիտական հմտութիւնը շատ աւելի համեատ է ու դիւրաստացի, քան ա՛յն որ կը պահանջուի որ եւ է գրագէտէ մը, ըլլայ ան վիպող, քերթող, կրգիծաբան, քննադատ, պատմագիր կամ թատերագիր: Այս պատճառով չէ՞ որ մեր այսօրուան գրեթէ բոլոր գրողները խիստ սահմանափակ կարողութիւն մը միայն կը ցուց-

նեն ու վստահաբար պիտի կորսնցնէին իրենց վարկը, եթէ փորձուէին քայլով մը խակ դուրս ելնել իրենց սովորական աշխատութեան անձուկ շրջափակէն:

Մեր հասարակութեան մէջ դէպի գիտութիւններն ու արհեստները սէր ծագեցնելու համար որչափ դաստիարակները՝ նոյնչափ և աւելի լրագրական խմբագրութիւնները հոգ տանելու են, քանի որ իրենց ձեռքին տակը ունին լաւագոյն միջոցը, մամուլը, ժողովրդական ամէն դասակարգերու մէջ մտցնելու համար նոր ուղղութիւն ու նոր գաղափարներ՝ գիտական ու արհեստական ճիւղերուն մէջ: Մասիս՝ իր հրատարակութեան երկար տարիներու ընթացքին՝ միշտ ցոյց տուած է միտումը առաջնորդող ըլլալու օգտաշատ, արգասաբեր ուղղութիւններ տարածելու ու արմատացնելու գործին մէջ, այդ պատճառով բարոյական պարտականութիւն մը ըլլալու է իրեն համար բուռն կերպով պայքարելու մեր հասնող սերունդին մէջ մուտ գտած այն կոյր հակալիրութեան դէմ, զոր կը տածէ ան տգիտաբար՝ գիտութիւններու և արհեստներու նկատմամբ առ հասարակ:

Ինչպէս յաճախ այս կամ այն յայտնի վիպողին կամ քնարերգուն խմբագրութեանց կողմանէ գիմումներ կ'ըլլուին, ինդերելով երբեմնակի աշխատութիւններով գեղեցիկ պէսպիսութիւն մը դնել առօրեայ հրատարակութիւններու մէջ, նոյնպէս յանձնարարելի է որ նմանօրինակ գիմումներով հրաւիրուէին նաեւ գիտական և արհեստական աշխարհին մէջ ծանօթ անձնաւորութիւններ իրենց հմտութենէն մաս ու բաժին հանելու լրագրութեան միջոցաւ՝ համալեզու ցեղակիցներու:

Աւելորդ չեմ համարիր յիշել հոս դէպք մը որ երեւան կը հփնէ՝ բաւական ծանրակշիռ պարագայ մըն ալ: Անդամ մը յայտնի օրաթերթի մը խմբագիրը դիմելով երիտասարդ պարոնի մը, որ Ֆրանսայի երկրագործական բարձրագոյն հաստատութենէ մը նոր վերադարձած էր ու իբրեւ առաջնակարգ ընթացաւարտ ոսկի միտալով մըն ալ վարձատրուած, կը խնդրէր իր մասնագիտութեան վերաբերող որ եւ է նիւթի մասին յօդուած

մը գրել և հրատարակութեան յանձնել : Մասնագետ պարոնը այդ առաջարկութիւնը սիրով ընդունելով կ'աւելցնէր. «Բայց ինձ համար շատ դժուար է հայերէն լեզուով պէտք եղածին պէս շարադրել. կարելի չէ՞ որ օր մը խմբագրատուն հանդիպիմ եւ դուք ձեր փափաքած նիւթի մասին ինձ հարցունելը տալով՝ պատասխաններս նօթագրէք և վերջէն աշխատիք յօդուածը դուք խմբագրել» :

Այս յատկանշական տխուր պարագան մեր թէ՛ թրքահայ և թէ՛ ռուսահայ «գարգաջած»ներու մօտ ընդհանրապէս նշմարելի է : Հայերէն լեզուի անբաւական ծանօթութիւնը շատերը ետ կը կենցնէ այդ մասնագէտներէն՝ դրական հրապարակին վրայ երեւալէ. խոսքս լրագրողները աչքի առջեւ ունենալով այս այնքան ցաւալի իրողութիւնը, պէտք է կողմնակի միջոցներով ուրեմն ջանան այդպիսիներու հմտութիւնը շահագործել ընդհանուրին, որով և իրենց օգտին համար :

Մասնանիչելով գիտական-արհեստական գրականութեան մեր ողորմելի աղքատութիւնը, կամ աւելի ճիշդ է ըսել՝ անոր բացարձակ չգոյութիւնը մեր մէջ, նպատակս էր գրդել Ձեզ, յարգելի խմբագրապետ, հրաւեր կարդալ այն բազմաթիւ սկսնակներուն որոնք գրական օգտաւէտ գործունէութեամբ մը գեղեցիկ անուն մը վաստակի կը փափաքին, ընդգրկել գրական այդ անխնամ ու անաշակ մնացած ճիւղերը ու ինքզինքնին նուիրել գիտութիւնն ու արհեստները ժողովրդակա-նացնելու բարերար աշխատութեան :

Յուսալով որ պիտի ուզէք Ձեր գրական ազդեցութիւնը այս մտքով ալ գործածել այսուհետեւ, կը խնդրեմ ընդունիլ իմ խորին յարգանքները :

ՀՐԱՆԴ Յ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Յաջորդ թիւով պիտի հրատարակենք՝ Վիպական քարգմանութիւններ մեր մեջ, ռուսամասերութիւն մը ՅՈՎՀ. ԳԱՅԱՆՆՆԵԱՆԷ, և Ինչպէ՞ս կը գրեմ ծանօթ հարցումին ոտանաւոր պատասխան մը Մ. ԱՃԷՄՆԵԱՆԷ :

ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՐԵՍ

ՏԻԿ. ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Գրելու եղանակներու :

Վեց էջ թուղթ, — աւելին չեմ ուզեր, երկար յօդուածներ գրելու բարի յատկութիւնը չունիմ, — դրիչ մը, մեղան և քիչ մը... արքայական :

Գործը արտօթեան վրայ է. ամէնէն զուարթ գրութիւնս տրտում վիճակի մէջ է որ արտագրած եմ : Երբ ջիղերս յոգնին, և երբ ռեժանապառութիւն մը յաջորդէ բոլոր շարժումներուն, այն ատեն սեղանի մը առջև կը վազեմ, միտքիս մէջ կանխապէս արդէն պատրաստուած ծրագիր մը ընդարձակելու, մանրամասնելու համար անմիջաբար :

Բաւորդէ մը աւելի չեմ զոհած բնաւ յօդուածներուն :

Երբ գրելու այդ տարօրինակ տրամադրութիւնս լուծուի, քայքայուի, յօդուածիս կէսը հասած միջոցիս՝ դրիչը իր սեղը կը դետեղեմ և սկսած գրութիւնս կը պատուեմ :

Խմբագրատուն զրկած յօդուածներուն բընադիրը քովս չեմ ունենար շատ անգամ :

Կը սպասեմ որ յաջորդ օրն իսկ հրատարակուի յօդուածս՝ եթէ օրաթերթի մը զրկած եմ դայն, այնքան անհամբեր եմ :

Երբ retoucheէ մը անցուած ատենեմ դրածս, յաճախ կը բարկանամ, և երբեմն ալ կ'երդնում ա'լ չգրել բնաւ :

Բայց երկու օր ետքը դարձեալ կը սկսիմ գրել, ո՛ր և է պարագայէ մը ազդուած, տըպաւորուած :

Բնաւորութիւններուն ամէնէն տարօրինակն է ասիկա : Գրկած յօդուածներս մինչեւ որ չի հրատարակուին, ուրիշ մը գրելու չեմ սկսիր :

Առաջին հրատարակութիւնս գերմանական նորափէյի մը թարգմանութիւնը եղած է, ծածկանունով ստորագրուած, որ հաւնուած է ծանօթ գրագէտի մը կողմէ :

Ատ օրը չեմ մոռնար :

Conservatoire եղած միջոցիս, օր մը պտոյտի ելած էի դատատուն՝ Բրոֆէսէօս :

կիցեոմ Բէլլըռի հետ: Ճամբան՝ չի ձանձրա-
նալու համար, պղտիկ սիրուն պատմութիւն
մը ըրաւ ինծի, և ես անմիջապէս իննթիւ բաղ-
ձանքը ունեցայ այդ պատմութեան բնադիրը
ուղեւոր, ու հայերէնի վերածելու:

Հրաշալի նորավէպ՝ մըն էր անիկա, այն-
պէս որ իմ այն ատենուան տկար հայերէնիս
վրայ, կրնա՛ր քօղ մը ձգել: Դիտած չէ՞ք որ
նիւթին ընտրութիւնը, գաղափարներու դա-
սաւորութիւնը, շատ անգամ ոճին ու լեզուին
յանցանքները, թերութիւնները կը մեղմեն:

Առաջին անգամ ըլլալով բուն ստորագ-
րութիւնս, գրականութեան մէջ, «Փայլակ»-ի
հռչակաւոր հարցումին առթիւ գործածած եմ:

Անկէց ետքը շատ մեղքեր գործած եմ,
անուշտ գրական խնդիրներու մէջ. բայց
հաւատացէ՛ք որ բոլոր մեղքերուս ամէնէն
մեծը կըզգամ որ Բրիգանթէմի «Հայու Կընիկ»
յօդուածին պատասխան մը գրելս էր:

Ես աղէկ կը ճանչնայի և շատ լաւ կը
հասկնամ զինքը, բայց անիկա երբե՛ք պիտի
չկրնայ հասկնալ զիս:

Գրելու եղանակներս հետադօտած պահուս,
պղտիկ չեղում մը ունեցայ: Այս չեղումը ա-
մէն ատեն կը պատահի: Պատճառը սա է որ
երբեք չեմ կրցած մէկ բանի վրայ սեւեռած
մնալ:

Փորձառութիւնը թերեւս բոլոր այդ կար-
գի թերութիւններս սրբագրէ օր մը:

Գաղափարներս ու զգայութիւններս թուղ-
թի վրայ տեսած ըլլալու նպատակով կը գը-
րեմ միայն: Բանաստեղծութիւն կը գրեմ՝
իմ հաճոյքիս համար լոկ: Նորավէպ կը գրեմ՝
բարեկամութիւններէս ներշնչուած: Սէրերս և
ատելութիւններս կը հրատարակեմ՝ անկեղ-
ծութիւնս մշտնջենապէս ապացուցանելու
համար:

Կնոջական հարցերուն վրայ կեանքիս մէջ
տող մը բան պիտի չգրեմ երբեք: Երգում
ըրած եմ, և այս երգումս ան միւս գրելէ
դադրելու երդումներուս չի նմանիր:

Ինքզինքս անշքացած, աղտոտած կը
զգամ, երբ անունս կալուօշներու բերնին մէջ
կամ գրիչին տակ տեսնեմ:

Երէկուան պաշտածս այսօր չեմ այրեր բը-
նաւ, վաղը անոր տեղ ուրիշ մը գտնելու
համար:

Գրական ռիս ըսուածը գոյութիւն չունի
ներսիդիս, կը բաւէ որ հակառակորդս իր
անքաղաքավար, իր յանցաւոր ըլլալը խոս-
տովանի:

Երբե՛ք, մինչեւ այսօր, բաց գրութենէ
մը չեմ գայթակղած՝ փոխ առնուած գիրք մը
կամ ձրի զրկուած թերթ մը ետ դարձունելով:

Լիւթի Ռիկիօքքօէն աւելի՛ կ'ազդուիմ՝
քան բանաստեղծական ո եւ է հատորէ մը:

Պառքառօլիս առաջին տասնըչորս քեր-
թուածները, անոր նուագումէն անմիջապէս
ետքը գրուած են:

Եւ բնաւ ջութակը չեմ առեր, անոր հա-
մար որ չսիրած մէկ անձս այդ երաժշտական
գործիքով կը նուագէ:

Գրելու եղանակներս չա՛տ պարզ են,
այնպէս որ կրցայ կարծեմ գաղափար մը տալ
անոնց մասին, մտամոխիման այս պահուս,
ուր ոչ մէկ բանի վրայ կը մտածեմ:

Բայց յօդուածս վերջացնելու վարկեանիս,
հալածող ուրուականի մը պէս դէմս կը կանգ-
նի այն հրաշալի կինը, որ Երաժշտութիւն կը
կոչուի, կին մը որ կ'երգէ միշտ, որ երան-
գապնակներուն բոլոր փափուկ թոյրերը, բո-
լոր նուրբ երանգները կը կրէ իր շղարշէ
նուրբ ու թափանցանց զգեստին վրայ, և
որուն մարմինը, ժապաւէններու, փետուրնե-
րու, երիզներու, թաւիչներու մէջ պարուր-
ուած, օգային ու ոսկեսար ներդաշնակու-
թիւն մը կը կազմէ, — ծիածանող ու պրիսմակ-
ուող ներդաշնակութիւն, որ նայուածքդ,
ուժերդ, հրայրքներդ կը գերէ, կը գրգռէ
տարօրինակ կերպով:

Գրելու սա քիչ մը կարողութիւնս՝ ամ-
բողջովին երաժշտութեան կը պարտիմ: Եւ
ասոր համար է որ եթէ երբեք ո եւ է պատ-
ճառով գրելէ դադրիմ օր մը, ցաւ մը պիտի
չզգամ երբեք, քանի որ անդին ուրիշ մը
ունիմ, երաժշտութիւնը, որ բանաստեղծու-
թիւններուն ամէնէն անսխիթականը, ամէնէն
divineն է, (*) և որուն սաւառնագին թեւե-

(*) «Die instrumental-musik ist die
romantischse aller künste, denn nur
das unendliche ist ihr vorwurf» — «Բոլոր
արուեստներուն մէջ ամէնէն բանաստեղծա-
կանը գործիական երաժշտութիւնն է. ան-
հունը միայն իբրեւ նիւթ կը ծառայէ իրեն»:

րուն մէջ ապաստանած՝ սենեակիդ մէջ առանձին, քու տառապանքներդ կրնաս սարսրալ համարձակօրէն, առանց ենթադրական կեղծ պարկեշտամոլութիւններու, հիացիկ, առանց ուրիշ մը ծաղրուելու կասկածներուն:

ՄՍՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍՅԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«Վանառականի մը Ուղեցոյցը». Գրեց Կարապետ Սօլախեան. (Մասն Ա.) Տպագրութիւն Սարքեան եւ Ընկ. Կ. Պոլիս. 1903:

Աստեղ մը ի վեր այնչափ վարժուած ենք դարձողական առատ դասագրքերու հրատարակութիւններ տեսնելու, որ շատ հաճելի տպաւորութիւն մը կը գգանք, երբ առիթ կունենանք ողջունելու ուսանողներէ տարբեր դասակարգերու գործածութեան յատկացեալ երկասիրութեան մը լոյս տեսնելը:

Այս կարգէն է փաստաբան Կարապետ Էֆ. Սօլախեանի նոր հրատարակութիւնը՝ Վանառականի մը ուղեցոյցը, որ, ինչպէս անուանէն ալ յայտնի է, գլխաւորաբար վաճառական դասակարգին ուղղուած է, դասակարգ մը՝ որ միշտ կարեւոր ու պատուաւոր մէկ մասը կազմած է մեր հասարակութեան՝ թէ՛ Օսմ. երկիրներու մէջ եւ թէ՛ աշխարհի ու եւ կողմը որ Հայ գանուած է:

Բայց Վանառականի մը ուղեցոյցը անունէն չկարծուի թէ հեղինակը նպատակ ունեցած ըլլայ նոյն իսկ վաճառականութեան գիտութիւնը սորվեցնել, որ իր մասնագիտութենէն դուրս է եւ մանաւանդ այսպիսի համեստ հատորի մը սահմաններուն մէջ ամփոփուելիք ուսում մը չէ: Վաճառականներու ուղեցոյց ըլլալու սահմանուած այս գիրքը ատկէ աւելի կարեւոր եւ անհրաժեշտ բաներ կը սորվեցնէ յստակ, պարզ եւ ամէնուն հասկընալի ոճով ու լեզուով: Իր փաստաբանական արուեստին հաւատարիմ՝ Սօլախեան Էֆ. վաճառականական օրէնքներու ամէնէն կարեւորները, անհրաժեշտները ու գործածականները ձեռնհասօրէն ամփոփած է այս հատորին մէջ, զոր իրեն ուղեցոյց բռնող վաճառական

մը կատարելապէս գիտակից կ'ըլլայ օրէնքի այն ամէն տրամադրութեանց որոնք կիրառութիւն ունին վաճառականի մը բացած կամ իրեն դէմ բացուած դատի մը մէջ: Աւելորդ է ըսել թէ վաճառական մը, ինչպէս ուրիշ որ եւ է անհատ, որչափ աւելի որոշակի գիտակ ըլլայ օրէնքի բոլոր այդ մանրամասնութիւններուն եւ ձեւակերպութիւններուն, որոնք ամբողջ գիտութիւն մը կը կազմեն, նոյնչափ վստահ կ'ըլլայ դատաւարութեան մը ատեն, կ'ուզէ ինքը սկսած ըլլայ դատը իր մէկ իրաւունքը գանձելու համար, կ'ուզէ ուրիշի մը կողմէ իր դէմ բացուած դատի մը մէջ ինքզինքը պաշտպանելու հարկին մէջ գանուի: Իրաւ, գլխաւորաբար փաստաբանի գործ է այդ, եւ խիստ հազուադէպ է տեսնել վաճառական մը որ իր դատը ինք անձամբ վարէ՝ փոխանակ փաստաբանի յանձնելու, բայց չէ՞ որ ինքն ալ գիտակցութիւն կ'ունենայ գործին դարձուածքներուն եւ օրէնքին նրբութիւններուն որով կոյրկուրայն հետեւած չըլլար փաստաբանին ամէն խօսքերուն, որոնք որքան ալ անկողծ եւ իրաւացի ըլլան, վերջապէս առանց գիտակից համոզման է որ պիտի ընդունուին դատին տիրոջմէն, եթէ ան ալ արդէն թափանցած չըլլայ օրէնքներու ոգւոյն եւ կազմութեանը: Օրինակի համար, ո՞չ ապաքէն ա'յն մարդը առանց խառնուելու եւ աւելի շահաւոր կերպով չինած կ'ըլլայ իր տունը, որ ճարտարապետութենէ կը հասկնայ եւ բոլորովին կուրաբար չի վրստահիր ճարտարապետին որուն կը յանձնէ իր տան շինութիւնը: Այսպէս չէ՞ նաեւ միթէ ամէն արուեստներու մասին ալ:

Բայց ամենէն աւելի անհրաժեշտ է այս պայմանը առեւտրական դատաւարութեանց մէջ, որոնք շատ անգամ մահու եւ կենաց խնդիր կը դառնան ենթականերուն համար: Եւ երբեմն առնուած սխալ քայլ մը կամ օրէնքի անգիտակցութենէ ծնունդ առնող վարանում մը կործանում առաջ կը բերէ ուսկից վերականգնիլ այլ եւ անհնար կ'ըլլայ:

Արդ, Վանառականի մը ուղեցոյցը այս թանկագին ծառայութիւնն է որ կը մատուցանէ բոլոր վաճառականներուն մասնաւորապէս եւ ամէն անհատի ընդհանրապէս, զի կը

խօսի ի մէջ այլոց Մահճէմէի Շէրիէի, Հուգուգի (Իրաւադատ), Ճէզայի (Պատժական), և Թիճարէթի (Առեւտրական) օրէնքներուն վրայ, կը պատկերացնէ վաճառականութիւնը իր տօմարներով և պարտաւորութիւններով, կը բացատրէ առեւտրական ընկերութեանց տեսակները (հաւաքական, շահակցական եւ անանուն), պատասխանատուութիւնները եւ կազմութեան ու ցուցման եղանակները. իբր «ի հայեւոյ» կը ներկայացնէ փոխանակագրի (փօլիչայ), յանձնարարումի (նեվալի), հրամանի եւ պարզ մուրհակներու, բրօքսի եւ վառուպահանջի (բրօքսը եւ զարար գիւն), փոխանցումի եւ երաշխաւորութեան (նիքօ և ֆեֆալիք) ձեւերը, սկզբունքները եւ անոնցմէ ծագելիք դատերը: Մանկութեան գլուխը մանաւանդ որ կը գրաւէ ամբողջ 58 էջեր, այսինքն գրքին $\frac{1}{3}$ մասը, խիստ մանրամասն կերպով բացատրուած է, որ մանաւանդ ներկայիս համար յոյժ մեծ շահեկանութիւն ու այժմէութիւն ունի, քանի որ դժբաղդաբար անանկութիւնները սկսած են այնքան յաճախադէպ դառնալ և սպառնալ առեւտրական ամէն վարկ ու պատիւ փճացնելու: Նոյնպէս խնամով աւանդուած են ծովային առեւտրական օրէնքները, դատաւարութեան օրէնքները (ուսուլը մուհաֆեմաքը ումումիյի), և դործադիր իշխանութեան (իմրա սայիբեսի) ու դրոշմի օրէնքի (թամիա նիզամնամեսի) վերաբերեալ կարեւոր ծանօթութիւնները:

Այս գրքին արժէքը ասով ալ շատ աչքի կը զարնէ որ թուրքերէն օրինական բառերը կատարեալ ճշգրտութեամբ թարգմանուած են հայերէնի և զիւրութեան համար զիմացնին ալ փակագծի մէջ թուրքերէնները գրուած են: Իսկ գործին վերջն ալ զետեղուած է բառգրքոյկ մը ուր նշանակուած են պաշտօնական ու օրինական կարեւոր բառերը թէ՛ հայերէն, թէ՛ հայատառ թուրքերէն և թէ՛ զուտ թուրքերէն:

Այսպիսի բովանդակութեամբ ու Սարբեան մաքուր տպագրութեամբ լոյս տեսած սոյն կարեւոր հատորը որ պիտի ունենայ սակաւին իր երկրորդ մասը, կուգայ լրացնել խիստ զգալի պակաս մը մեր գրեթեական արտագրութեանց մէջ: Կ'արժէ որ ամէն անհատ, ըլլայ

վաճառական կամ ոչ, օրինակ մը ունենայ իր ձեռքը:

ԳՐԱԿՐԿԻՏ

ՅԱԿՈԲ ՀԱՃԵՍՆ, ժողովրդական դաւեչտագիր մը, որ երկար տարիներէ ի վեր կ'աշխատակցէր իրարու յաջորդող մեր դաւեչտաթերթերուն, մեռաւ շարթուս Եէնի-Գարու, իր բնակարանին մէջ և յուղարկաւորութիւնը կատարուեցաւ անշուք կերպով: Թէև զարգացած մտքի տէր մէկը չէր, և զէպուածով միայն ինկած էր լրագրական ասպարէզը, բայց ծանօթ ընտանիքի մը զաւակը ըլլալով և իր երիտասարդութեանը՝ նիւթական փայլուն վիճակ մը տեսած անցուցած, ուսումնասիրութեան առատ նիւթեր ունէր ընկերային ու ընտանեկան կեանքէ, զորս կը պատկերացնէր ակորդելի ոճով մը: Պահ մը խմբագիր ալ եղած է, հրատարակելով Միմուս դաւեչտաթերթը: Պաշտօնակից մը՝ որ մօտէն կը ճանչնար հանդուցեալը՝ անոր նուիրած Գրոնիկի մը մէջ կը գրէ. — «Թերեւս կարգացած էր ժամանակին Պարոնեսնի գրած այն տողերը, թէ երբ մարդ յուսահատի՝ կամ անձնասպան կ'ըլլայ և կամ... խմբագիր»:

Վիպական ձևովն ալ մշակած է Հաճեան, միշտ ժողովրդային խաւերը պրպակելով. և թէպէտ իր գրուածքներուն մէջ ոչ վիպական արուեստ կար, ո'չ գրականութիւն, ու ո'չ ալ ոճի և լեզուի խնամք, ասով հանդերձ իր Բեքայի գիշերները ու Հեղինեկ բաւական հաւնուած են՝ իրական կեանքի պատկերներ ցուցադրելուն համար: Այս վէպերուն հիւսուածքին մէջ՝ Հաճեան կը ներշնչուէր Եւրոպական Թերթօններէ, արկածալից պատմութիւններ պատմելով:

Իր նախորդ գիրքը կորսնցնելէն ետքը, լրագրական ու վիպական աշխատութիւնները երբեք չապահովեցին իրեն նիւթական բարեկեցութիւն մը եւ չքաւորութեան մօտեցող չրջաններ ունեցաւ իր կեանքի վերջին տարիներուն մէջ:

Մանգումեի այսօրուան թիւին մէջ՝ Քասիմ իր «Օրուան մտածումներ»ը կը նուիրէ հանդուցեալ զաւեչտագրին, անձնական յիշատակներով ու անէկադղներով խառն շահեկան յօդուածի մը մէջ ներկայացնելով Յակոբ Հաճեանը:

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

Մնայլ եր յունուար . ձիւնը՝ ձոր ու սար
Ծառերն ու քուփեր ծածկեր հաւասար ,
Բըմահան փունջեր ծաղկի լուսեղէն
Յօրինէր կախեր ամեն մէկ հիւղէն .
Ես պատահանիս ետեւէն դողդոջ
Լքեի հովուն կոծն որոտագոյ .
Զուարթ արտոյսին բունիկն եր քափուր ,
Ու սեւ ագռաւներ կուլային իսուր :
Այդ ձիւնը՝ ծաղիկ վրէիս , անտերեւ ,
Պատահմն եր զարման կեղծ ու անարեւ .
Ու վաղը բոռմած կը հալի վրէիս
Ինչպէս հիւանդին խուսափուկ ժրպիս :

Ապրիլին կախարդ ու արգասաբեր
Մասները պննեն ծառերն ու քուփեր .
Զորերէն մինչեւ սարեր լեռներուն
Ծաղիկներ բացուին գոյնով վառվառն՝
Որ գերդ դիւքական ծիրանի գօտի
Լայն կը տարածուի ու անուշ հոտի .
Վարդեցիք հագած նոր տերեւ՝ նոր ծիլ
Հարսի նագանով կը սիրեն պարծիլ .
Դեռ պուտ մ'անձրեւի , կաթիլ մը շողի
Կարօտ են իրենց կոկոններ յըղի :
Կապոյտ բունիկներ հիւղերէն առկալս
Ուր սարեկներու ձագուկներ ուրախ
Կը շարժեն իրենց քեւեր խառնուիկ ,
Կարծեմ իրարու կ'աւետեն Զատիկ .
Ոսկեքերթ ֆուլիան , իլիւն նրբագոյն ,
Համեստ մանիշակն , ոսք ձիթենւոյն ,
Սուրբ Թադումին շուրջ հիւրերն են քնուշ
Որ խունկին խառնեն իրենց բոյն անուշ .
Գարուն ու Զատիկ զիրար համբուրեն ,
Աստուած ալ կ'օրհնէ երկնականարէն :

Մ. ԱՃԵՍԵԱՆ

ՏՈՒԱՅՏԱՆԻՔ

(ՆՈՐԱՎԷՊ)

ՔՐԻՋԱՆԹԵՄԻՆ

I

Ահագին ոգևորութիւն կարան դիչերը***ի յունական ձմեռնային թատրոնին մէջ որ Բարեկենդանի շաբթուան գուգադիպիլ տուած էր մէկը իր տարեկան այն մեծ պարահանադէսներէն որոնց՝ դիւզին ծանօթ ընտանիքները ու մանաւանդ գեղապաշտ աշխարհիկներ հաճոյքով կը դիմեն, բարեգործական նպատակի մը յաջողութեան նպատած ըլլալու գոհունակութեան չափ՝ քանի մը քաղցրահնչիւն ժամեր ալ անցունելու գիտակցութեամբ։ Հոլանի ուսեր, ճաճանչաւոր դէմքեր՝ օթեակներու խորը, շնորհալի լքումներով կը տիրէին յաղթական, մինչդեռ ուրիշներ, բեմին մօտ կանգուն կամ նստարաններու վերայ, ապահովաբար նոր եմբիկներ յղանալու զբաղած էին՝ իրենց ծպտուն հանգամանքով։ Շուրջներս, ամէն կողմ, կարգադիր մարմինն ջերմեռանդ անդամները իրենց փափկանկատ սեռվիաներով օգտակար հանդիսանալու ջանք չէին խնայեր։

Երանութեան մանրանկար-աշխարհ մը վերջապէս՝ ուր ամէն մէկը իր ճաշակին ու հոգեկան վայելքի ըմբռնումներուն համաձայն պիտի գուարճանար այդ գիշեր, հոգ չէ թէ վաղորդայնի մը դառնութեամբ համակուէր միւս օր—անակնկալ պատրանքներու անողորմ յաճախումէն։

Թէ առաջին պահերը ի՞նչ արագութեամբ սահած էին, ո՛չ ոք գիտէր։

Կռան ռքօս հարկ եղած կաղզոյրը պարզեւած էր արդէն ընտրեալ հաւաքոյթին իւրաքանչիւր անդամին, երբ քառնները ձեռք առնուեցան կրկին, և ընդհանուր դուարթութեան մը մէջ, անխոնջ քալիքներ իրենց պարընկերուհիները սրահին խորը փութացուցին։

Վալսի նշանը սրուած էր։ Ու մեքենա-

բար, տենդագին յորձանուաի մը մէջ, զոր Թոնիի խիզախ նուագախումբը սկսեր էր—յուզեալ, ելեկտրացած պարի սիրահարներ—ուսրաի, հոգիի՛ ալ սիրահարներ—գիրկընդխառն ու արբշտուն կը դառնային ա՛լ, ոտքերու ճապուկութեան ու շարժուձեւերու փափկութեան տարօրինակէս վայելուչ ներդաշնակութեամբ մը զոր ա՛յնքան գիտեն երեւան բերել վալսի օրօրուն ծփանքին անձնատուր՝ երազատենչ հոգիները։

Ակնթարթ մը բաւեր էր քիչ մը առաջ ուսան այն լայն ու թափուր սրահը, յանկարծ, մարդկային հսկայ կոհակաւորումներով ողողելու և հիմայ, դիմակաւորներու և անդիմալներու ղաւեշտոտ հակադրութեան հետ—կեանքի ինքնախաբուրթեան պատկերներ—այլերապար, թափանցիկ մշուշ—ամպի մը բարձրանալը կը դիտէր հանդիսատեսը, աւալացած, լքուն օթեակներուն լոյսերն ի վեր ծփացող։

II

—Յոգնեցա՞ր Ալիս, կը հարցնէր Վահրամ, դարոցական հին բարեկամ մը, իր քովի դիմակաւորուհիին, —զորս՝ ծպտած ըլլալուն հակառակ ճանչցայ—և այս վերջինին գլխու հաստատական շարժումին վրայ աւելցնելով։

—Եկուր քիչ մը պիւժէն երթանք։

Ժամ մը ամբողջ պարեր էին և հանդիստի պէտքը զգացեր։ Հանդիսալո՞ւ։ Թերեւս։—Հիմայ առջեւէս իրենց հեռանալը կը դիտէր անձնակալին, երիտասարդը իր անձանօթ մնալ ուղողի անքնական, կեղծ քալուածքին մէջ ու ընկերուհին՝ անօր թեւէն կախուած, պըշտոտ, փափկանալ։

Աշխոյժը, թափը կը շարունակուէր ասդին անհամբեմատ ուժգնութեամբ։ Անխուսափելի Բալթիին տիրող ձայնը երկու հոծ կիտաբաժիններ կաղմած էր քառիկ համար, երբ նուագախումբը այս անգամ Petits cochonsը հնչեցնել սկսաւ։ Վահրամին ալ չուզածը։ Վերջապէս Ալիսին հետ առանձին պիտի մնար։

Փափուկ, նրբաւարտ գեղեցկութեամբ աղջիկ մը այդ Ալիսը, որուն խորաթափանց ու գլխակցող աչքերուն հրախաղութիւննե-

րուն չափ հողիին խուսափուկ չնորհներ լա-
րիներ ամբողջ զբաղեցուցեր էին երիտասար-
դը, ինքն ալ իր կարգին զգայնոտ էակ, որ
զայն իբր իր իտէալը կը պահէր:

Այս պարագան, դեռ ուրիշներու հետ,
անծանօթ չէր ինծի և հետաքրքիր էի գիտ-
նալ թէ մինչեւ ո՞ր աստիճան պիտի մտածէր
Վահրամ օգտուիլ այդ առանձնացումէն:

Ալիսի ծնողքին համար տան մտերիմներէն
մէկը կը նկատուէր երիտասարդը, գրեթէ եղ-
բայր մը, և անոր վրայ իրենց ունեցած բա-
ցարձակ վստահութենէն էր որ իրենց աղջը-
կան այդ գիշեր Վահրամին ընկերակցութեամբ
պարահանդէս երթալը թոյլատրեր էին:

III

Կարճ դադար մը յաջորդած էր երկարա-
ձիգ ու հրապուրոտ կալօթ-վալսին: Ոմանք
իրենց օթեակները քաշուած, ուրիշներ իրենց
ընկերուհիները յաւիտենական պիւժէն առաջ-
նորդած և մէկ քանիներ ալ պտոյտով մը
այդ հանգիստը վայելելու վրայ էին:

Վահրամ ալ այս վերջիններէն էր:

Կեանքի յուզումնալից ու փոթորկոտ անց-
քէ մը վերջ՝ երանաւէտ անդորր մը այդ պահը
ուր խոստումներու, յուսալից բառերու կամ
մտերմիկ խօսքերու փոխանակութիւն մը ա-
ամենէն հմայիչ ժամանակներէն մէկը կը կազմէ,
սպրած ըլլալու վայելքին հետ:

Եւ արդէն բուն ասպրուած վայրկեանները
չե՞ն տոնք:

Վահրամ իր սև soufինօն ու բարեկամու-
հին իր գեղացի աղջկան յատկանշական ծըպ-
տումին մէջ կը շարունակէին շրջադայիլ: Ի-
րենց վստահ ու անխուլ ընթացքը եւ չուր-
ջերին անցած դարձածին անտարբեր երեւ-
ոյթնին՝ տղաւորութիւնը կուտար թէ անծա-
նօթ մնալ յաջողած կը կարծէին ինքզինք-
նին: Անոնց այս ինքնախաբուծիւնը աւել
հաճելի բան չպիտի ըլլար անուշտ, մանա-
ւանդ ատանկ վճռական պարագայի մը մէջ
ուր իրենց ասպրուայի դերը պիտի վերջնապէս
ճշդուէր: Եւ յետոյ, Վահրամը կը ճանչնայի
արդէն, սրտի խնդիրներու մէջ քայքայեալա-
պէս դադանապահ այդ աղան վաղը ինքնա-
բերաբար ինծի պիտի գար իր հողեկան վի-

ճակը աչքիս առջեւ դնելու—ինծի՛ մինակ,
իր սրտակիցը, իր միւս ետը:

IV

Իրաւ ալ եկաւ:

Յաջորդ կիրակին, առտուան դէմ, իմ
Սբլանտիտ մանկէս նշմարած և քովս փու-
թացած էր. ու անմիջապէս սեղանի մը առ-
ջեւ անցնելնիս և ան գիշերուան պատահա-
ներուն զուգադիպօրէն անդրադառնալնի՛ս
մէկ եղաւ:

Տխուր ու մտահոգ երեւոյթ մը ունէր,
խօսած ատենը, դարեջուրի փրփուրները դի-
տելով մերթ, ու նիշար մատները երբեմն
ճակտին տանելով իբր թէ մղձաւանջ-գաղա-
փար մը հոնկէ վանելու շարժումին մէջ:
Անձկութեամբ մտիկ կ'ընէի զինքը երբ կը
շարունակէր.

—Այսպէս, ահալի ճգնաժամ մը անցու-
ցի: Ես սիրոյ վրայ կը խօսէի իրեն և անիկայ
պարտականութեան զգացում մը կը յիշեցնէր
ինծի: Անձնուիրութիւն կը պահանջէր ինէ.
Գիտե՞ս որո՞ւ հաշտոյն, իր հօրեղբօր աղջկան,
Մատլէնին...

—Վա՛յ, բացադանչեցի դառնութեամբ...

—Այդ աղջիկը գիտ կը սիրէ եղբեր...:
Հիմայ դուն իմ տեղս եղի՛ր և Ալիսը զո՞նէ
Մատլէնին. կարելի՞ բան է, եղբա՛յր:

Պահ մը լռեց: Մեղաւորուհիին Թէօֆիլ
բանաստեղծին դժնդակ՝ դերը վիճակը էր
կարծես խեղճ բարեկամիս որ սիրոյ ու կրքի
երկու մեծ զգացումներուն միջեւ իբր թէ
ընտրութիւն մը ընելու դատապարտուած ըլ-
լար: Այս պարագան դիտել տուի իրեն, ո-
րուն հանդէպ ցաւատանջ աւելցուց.

—Թէօֆիլ՝ Մառիով տառապեցաւ ու Տաֆ-
նէին ետեւէն ինքն ալ փակեց իր աչքերը...:
Բայց ես կ'ուզեմ որ իմ կեանքս անորինին
պէս նաւաբեկութիւն մը չըլլայ: «Դուն ոտ-
քերուդ տակ կոխուտուած սիրտ մը ունիս»
կ'ըսէր ինծի Ալիս, ախարկելով Մատլէնին
դժբախտ սիրոյն և զիս կը հրաւիրէր անոր եր-
ջանկութեան փութալ: Ալ կարելի՞ էր յա-
մառիլ Ալիսին մօտ որ, գիտե՛մ թէ համակ-
րած էր ինծի, բայց անձնուրացիկ զոհողու-
թիւն մըն է որ կ'ընէր...

Գարեջուրի դաւաթները կրկին լեցունեցան : Չէի ընդմիջեր զինքը : Ուղածին պէս կը խօսէր : Բայց կը հաւատայի թէ այս արդուն հոգիէն բուռն տագնապ մը անցեր էր ամպրոպի մը պէս...

— Կը յիշեմ թէ իրեն պատասխանեցի՝ պահ մը պարողները ցոյց տալով. «Ալիս», նայէ սա յորձանքին. կեանքը տես. ամբողջ յուզումներով լեցուն է. արդէն շատ տառապած ենք և այս զոհողութիւնը խնայէ՛ ինձի — ու քեզի՛ ալ : Կ'ուզես որ մինակ բարեկամ մը մնամ քեզի, բայց չեմ կրնար...» և անիկայ յարեց սապէս.

— Վահրամ, անօգուտ են խօսքերը : Դուն կրնաս : Փորձէ՛ և պիտի տեսնես :

V

Լուծո՞ւմը :

Իր առեղծուածային վիճակին մէջ մնաց անոր սրտին կնճռոտ ցանցաւորումը, և ամիսներ վերջ, տակաւին կը յիշէր ան այդ փայլուն պարահանդէսէն՝ իր հոգիին իբրեւ հաճոյքի բաժին՝ դառն ու մութ տուայտանք մը վիճակած ըլլալը : Կուրծքին տակ, որ ամբողջ լեցուած էր Ալիսին — զինքը ներշնչող սիրոյ — յիշատակովը, նոր անձնագոհութեան մը զգացումը տեղ չի գտաւ :

Նախաճիւղ թէ անխուսափելիութիւն՝ Մատէնին այդ անողորմ սէրը, որուն Վահրամ երբեք չկրցաւ ներել...

ՄԻՋՐԱՆ ՌԵՂՈՒՐԵԱՆ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՄԿՐՏԻՉ ԱՃԻՄԵԱՆ

Ընտանիքի բարի հայր մը. ալեւոր մօրուք՝ բայց երիտասարդի հասակ, առանց որ եւ է կքովի, մեղմ. անոյ խօսուածք, հեղահամբոյր բնաւորութիւն, «մըջիւնի վրայ չի կոխելու» զգուշաւորութեամբ բուխ-սիրտ : Ասանցմէ պէտք չէ հետեւցնել սակայն թէ մեղմ caractère մը ունի. ընդհակառակը :

Անձով լուրջ ու պատկառելի, երկար տարիներէ ի վեր կարեւոր պաշտօնի մը գլուխը կը դասուի հեռագրական վարչութեան technicienne ճիւղին մէջ. դրական ու գիտուն՝ իր գործի սահմանին մէջ, և անկէ դուրս, իր պարսպոյ ժամերուն, երսզոտ ու բանաստեղծ :

Մկրտիչ Աճէմեան, նախկին սան Վէնետիկի Մխիթարեանց, կը պատկանի իբր կէս դարու արժանաւոր համբաւ մը վայելող մեր այն բանաստեղծներու և գրագէտներու զըպրոցին, որոնց վրայ աղնուական հով մը կայ և որոնց փայլուն ներկայացուցիչները կը մընան միշտ ինքը և Թովմաս Թէրզեան. սա տարբերութեամբ որ, մինչ Անակրեոնի ցաղերուն թարգմանիչը շատոնց վար դրած է գըրիչը, գէթ մամուլին ու հանրութեան համար, Ժալիսի եւ առսաուլի հեղինակը կը շարունակէ քնարերգել : Իր բանաստեղծութեանց երեք տաղգիր հատորներուն չափ, եւ թերեւս աւելի թիւով քերթուածներուն՝ խնամով դասաւորուած, պահուած, ձեռագիր վիճակի մէջ, որոնք Վերջին կայծեք անունով ստուար հատոր մը պիտի կազմեն՝ երբ տաղգրութեան յանձնուին :

Իիչեր կը յիշեն, այսօր, թէ այս զգայուն քերթողը պահ մը խմբագիր եղած է... զուտ անտեսական հարցերով զբաղող հանդէսի մը, ՏՏՏԵՍԻ : Բայց ինչ որ անձանօթ կը մնայ զինքը կարգացող հասարակութեան, արդի սերունդին մասնաւորապէս, իր երգիծաբան-բանաստեղծի յատկութիւնն է զոր քիչ անգամ ցուցադրած է, այն ալ երիտասարդութեանը օրերուն : Հեզոտ, խայթող ոտանաւորներ դրած է, որոնք զինքը Հայ Պէռանփէ ախողոսին արժանի պիտի դարձնէին՝ եթէ հաճոյք զգար մշակելէ նաեւ այդ ճիւղը :

Սէրը՝ իր մեղամաղձոտ ու տխուր գրչին տակ՝ աննխթական բան մըն է, հովուերգութիւն մը. և սչրող կլններուն, կամ Զօհրայի բացտալութեամբ՝ «անձնամատոյց»ներուն եթէ ոտանաւոր մը ուղղելու ներշնչումը ունենայ, կարեկցութեամբ ու ցաւով լեցուն տողեր է որ կ'արտադրէ :

Մաքուր, իաէալ սէրերու բանաստեղծն է Աճէմեան, և իր Ժալիսի եւ առսաուլի,

Լոյս եւ սոսկեքը ու Գառնան հովերը, իրենց ներդաշնակ երգերով թրթռացուցած են տասնընչեքէն քսան տարեկան ամուսնեւոր սիրտեր, սրինգի մը ներդաշնակութեամբ որուն անուշութենէն բան մը չեն պակսեցուցած տարիները, մինչեւ հիմայ, ու Վերջին կայծերը պիտի ունենան նոյն հմայքը, — գարնան զուարթ առաւօտի մը ու աշնանային իրիկնամուտի մը գեղեցկութեանց մէջ կեցած տարբերութեամբը միայն:

ԳԱՄԷՐ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

“ՏՂՈՒ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ,

— — —

Վերջին օրերս, Բարիդի մէջ հրատարակուեցաւ մէկ նոր ու շատ գողարիկ հեղինակութիւնը Անտուէ Թէօօիէի որ, Ֆրանսայի արդի առաջնակարգ գրողներուն մէջ, կը շարունակէ իր յատկանշանական դիրքը պահել: Այդ հատորէն, — որ կը կրէ Տղու Զգայութիւններ խորագիրը, — Մասիսի ընթերցողներուն համար կը ներկայացնէ թարգմանաբար էն թարմ ու շնորհալի մէկ-երկու էջերը:

Վ. Գ.

ԿՐԱԿԸ

Բնական երեւոյթներուն մէջ, անիկա՝ որ մանկական երեւակայութեան վրայ կ'աղդէ ամէնէն թափանցիկ, ամէնէն խորհրդաւոր կերպով բնատուեղծական՝ եւ որ ամէնէն աւելի հիացումներ կ'առթէ, կրակն է ապաքէն: Հին ատենը, ա՛ն կը բերկրեցնէր ու կը լուսաւառէր ամէնէն խեղճուկ բնակարանները. իսկ այժմուս, ջերմաբաշխներով, կաշով ու սալամանտրով տաքնալու դրութեան պատճառաւ, փոքրիկ քաղքենիները այլեւս ատիկա միմիայն լսելով է որ պիտի գիտնան: Կրակը, ձոյլ ոսկեզոյն, ձմեռ ատեն, արեւուն փոխանորդն է, ու շատ դիւրաւ կարելի է ըմբռնել թէ, նախնական դարերուն, մանուկ ժողովուրդները զանիկա իբր աստուած կը պաշտէին: Երբ բոցանոյլ կրակը, արտեւաններէ արտեւաններ կը վառէր՝ ծանուցանելու համար Տրովագայի առումը, ամբողջ կրօնական յարգանքով մըն էր որ կը

դիտէր երեւումը այս լրատար բոցերուն: Դեռ շատ ժամանակ չէ՛ անցած, Սէն-ժանի գիշերներուն միջոցին, Ֆրանսայի չինականներն ալ, ամէն մէկ գիւղի մէջ, միեւնոյն հետաքրքրութիւնով կը դիտէին հրդեհումը ուրախութեան հուրքերուն, որոնք կը փայլէին բլուրէ բլուր, ու, տարբոյեղու համար կրակին հնադարեան սլաշտամունքը, հնոցին բոլորտիքը կը պարէի չրջերգներ երգելով...

Այսօր, մեղամաղձօրէն խառնշուկելով վառարանիս կրակի կտորները որոնք կը սեւնան, խանդաղատած՝ կը յիշեմ ընդարձակ շմինէն խոհանոցին ուր, ինծի տարեկից բլէզներու ընկերացած, իմ ձմեռային օրերուս աղուոր մէկ մասը կ'անցընէի: Այս լայնանիստ կրակեաղը, որուն շուրջը ընտանիքը կը հաւաքուէր իրիկուան, շարժագոյններով կահաւորուած էր, որոնք հիմա անհետացած են: Նախ կար միաձոյլ ու սառար՝ միտաղէ տախտակը որ վառարանին պատին մէջ ագուցուած էր. յետոյ, մուխէն սեւցած կըլնալարը, որուն կը կախէին մերթ պղինձէ եռոցը ուր ջուրը կ'երգէր եւ մերթ սանը որ գետնախնձոր եփելու սահմանուած էր: Երկաթէ հաստատուն մեծ փայտակալները՝ ամբողջ ծառի արմատներ կը կրէին: Դղքեւիայէ ազանօթը կախուած էր մերկ սլառէն վար. անոր դէմը՝ ուրիշ մուրտտ տուփ մը կար, ուր չվառած լուցկիներու տրցակներ կը դնէինք: Որմանկիւնը երկաթէ թիւն ու կրակը խառնելիք կողին քով, անամէջ խողովակ մը կը կանգնէր, զոր «հրացան» կ'անուանէին: Այս ասպնջակալ բուխերիկին դարաւանդակին տակ՝ մեղի համար անդադար զարմանալի ու դրօսեցուցիչ բաներ կային նորանոր. կապտորակ կաղին յտակ սոյլերով յանկարծական ցայտումները, խոհարարուհիին գուշակել կու տային նոր վիճակ մը. վառած, ուսուած արմատներուն յեղակարծ փուռումները՝ խորոյկին վըրայ՝ ուր մանիշակագոյն սղաղիկ բոցեր կը պարէին չրջմոլիկ հուրերու նման. ու՝ դեռ նոր՝ վառած կոճղերը՝ որոնց չորացին մեզմէ մէկը կը դառնար, գծգծելով կարմիր հոսքեր զորս մենք «երիզներ» կ'անուանէինք. եւ իրիկունը, երբ կրակը կը մարէր՝ մոխիրներուն տակ, սուր ու սրտիւն ճիւղ միշտ

անտես ծղրիթի մը, որ իր ընտանի երգով կ'օրորէր մեր արդէն նիրհած գլուխները:— Առտուն, երբ կոճղերը բոցանային ու խարոյկը շառագունիլ սկսէր, մեծ հայրը՝ փուռէն թարմ թարմ հանած նկանակ մը առած կու գար. երկայնքին կը կտրէր զայն, շերտերուն միջուկները կը կարագէր առատօրէն ու կրահին կը դնէր՝ երկաթէ լայն կասկարայի մը վրայ տեղաւորելով: Հացին կեղեւը տակաւ տակաւ կը խորովէր, կարագը հալելով ու գալարուելով՝ կը թաթաւէր հացին միջուկը, համեղ բուրմունք մը կը ծաւալէր շրմինէին տակ, ու մեծ-հայրը, կարագը աղէկ մը ծծած շերտերուն վրայ աղի հատիկներ ցանկէն ետքը, տաք տաք, կը բաժնէր հրապուրուած դէմքերով ու կարկառուն ձեւերով:

Ճաշին մօտիկները, տեսարանը կը փոխուէր: Շամփրալարը վառարանին անկիւնը հաստատուած, իր շղթայիկներու, կշռոցներու և ընդադոյցքներու մեքենան կը դարձնէր: Խոհարարուհին շամփուրին կ'անցընէր երբեմն սխտորով ոչխարի զիստ մը, երբեմն ալ ճարտարօրէն ժողվտուած վառեակ մը, ու հրակէշ կրակին առջև, տեսարանը, ժամացոյցի թիք թաքով մը կը փոխուէր. խորովոյքը կը կարմրէր բացարձակ, միսին ջուրը իւղոտ շիթերով կը կաթկթէր ճարպընկալին մէջ, ուրկէ դգալով զայն հանել ստիպուած էինք՝ ճարպիկօրէն ձիթելու համար ծխուն ու աղուոր գոյնով միտը...:

Ու այսպէ՛ս է որ ես սրկրամով եղայ:

* * *

Այս մատաղ տարիքներնուս, կրակին հետ տանդուամ մեզ կը հալածէր ամենուրեք: Երբ գեղեցիկ եղանակը վերագաւառար, դըպրոցէն կը փախչէինք՝ երթալ պտուկելու համար սարահարթները ուր կըսր բլրակներով խոպանները կը վէտովէտէին այգիներուն ու անտառներուն միջև: Այս առանձնութեան մէջ, մեր առաջին խնամքն էր մեծ կրակ մը վառել: Վառելիքնիս ձեռքերնուս տակն էր. այգեստանին որթատունկի կտրուած ուռերը և անտառին եղերքէն չորցած ձիւղերը, որոնք առատօրէն կրակ կը հայթայթէին մեզի: Երեք կարանկոշտերու միջև կը դնէինք մեր

խարոյկը, հոն բարդելով նաև գօս տերեւներ: Լուցիկի մը կը բռնկցնէինք ու հաճոյք մըն էր բոցին կամաց կամաց փայլիլը, կանանչ ոստիկներուն գալարուելով ճարձատելը, և ծուխի կապոյտ սիւնին խաղաղ օդին մէջ բարձրանալը դիտելնիս:

Վերստին կը տեսնեմ այն վայրը, որ ժայռուտ կընրածեւ լեռնահովտի պէս տեղ մըն էր, ուր կարճ խոտին մէջ, թորթիկներն ու ծոթորները կ'ընդելուզէին իրենց սաղարթները բուրմնաւէտ: Հնամենի թեղօջները անտառին սահմանածայրը կազմելով՝ մեղ կը ծածկէին բարակ ստուերով մը, ու արօտաւ վայրին դիմացի կողմը, հուսա՛ հուսա, գիհիներ իրենց թաւուտ կոնը կ'արձակէին: Տեղը հնամեայ հովանիի մը հանդամանքը ունէր և, մեր դասական յիշատակներովը, ինքզինքնիս սրբազան անտառը մտած կը կարծէինք: Օր մը, դիցաբանու թեւէն ու նաև թերեւս մորիներու հոյգէն գինով, որոշեցինք զո՛հ մատուցանել: Տաբաբախտ մացառագորտ մը, փոսի մը մէջ յանկարծակիի եկած, ձեռքերնիս ինկաւ. ծխարձակ հնոցին մէջ կը նետէի զայն, մինչդեռ ընկերս՝ չեմ գիտեր Հորասի ո՛ր տաղը կ'արտասանէր: Հիւսիսային հովը քաղցրանուաղ կը մրմնջէր սահմանածայրին թեղօջներուն մէջ ու մեզի կը բերէր բոյրը կիթոցի համար հասունցած այգեստաններուն: Ժայռերու լեռնահովտին ընդհանուր չափաւոր գիծերը, վէտովէտուն խոպանը, մեր կրակին մոտից որ ուղղակի կը բարձրանար դէպ ի երկինքին լուրթը, հոգին բուրմնաւոր, խորունկ անտառներու մերձաւորութիւնը, — ամենքն ալ մեզի հին Յունաստանի գիւղանքերի մը պատրանքը կու տային: Քարին վրայ կեցած՝ ոտեր կը նետէի խարոյկին վրայ ու կը պտուայի.

—Io, Paean!...

Ու այսպէ՛ս է որ ես կրակապաշտ եղայ:

* * *

Քիչ մը աւելի ուշ, դեկտեմբերի իրիկուն մը ինքզինքս կը դանեմ դարձեալ՝ սիրուն պայծառ կրակի մը առջև, որուն կը նայեմ խանդաղատանքով. բայց, այս անգամ իմ

ԽՄԱՌԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

ԿԱՐՈՋԻ ՄՐՅՈՒՄ

Նահանգիս քաղքենի համեստ սալօնի մը մէջ:—Կրակարանին անկիւնը, ցած աթոռի մը վրայ, դէմն նստած էր տասներորոս տարեկան աղջնակ մը, որ խիստ կանխաճառ էր մտրմնով և մտքով: Նուրբ ու թխահեր էր ան, գրեթէ արդէն ձեւաւոր. հիւսուած ծամեր կը շրջանակէին իր աղուոր կիսադէմքով, սեւ ու քիչ մը ամէկոտ աչքերով երեսը: Ես ա՛յ տասներվեց տարուի մօտ էի, ու հռետուրութեան դասեր կ'առնէի. ինքզինքս շատ անատակ կը զգայի այս պատանուհիին քով որ արդէն փոքրիկ կնկան մը շնորհալիութիւնը ունէր: Անկիւն մը, մեր ծնողքները ուխտը կը խաղային, լամբարի մը հովանաւորութեամբ, որ սենեակին մնացած ամբողջ մասին չուք կու տար: Գրեթէ մեղի ուշադրութիւն չէին ընել, ու՛ շրմինէին անկիւնը սեղմուած՝ կիսաձայն կը խօսէինք: Իմ դեռատի բարեկամուհիս, որուն մայրը զինքը չէր հրակեր այնչափ, խառնիխուռն, ամէն բանէ մէջմէկ քիչ կարդացած էր, Ուոլթըր Սքոթի վէպերը, Մօլլէրի կատակերգութիւնները: Ու հիացումով կը յիշէինք այն անցքերը որոնք ամէնէն աւելի մեր աչքերուն զարկած էին, ծանրանալով մանաւանդ ա՛յն էջերուն վրայ ուր սիրոյ հարց կար: Երբեմն, այս թուումներէն վերջը, յանկարծ համր կ'ըլլայինք, բայց մեր նայուածքները իրարու կը հանդիպէին վառարանին լոյսերովը, որոնք իրարու մէջ կը խառնուէին, յետոյ վարանքով կ'իջնային դէպի կիսավառ կոճղերը: Դուրսը, պարիսպը կը սուլէր ու իր կոծին երկարելը կը լսուէր սանդուխին նրբանցքին ու խաղխամին մէջտեղէն: Ներսս կը զգայի սեսակ մը հեղձում որ միեւնոյն ժամանակ անձկալից ու քաղցր էր: Երբեք դորովոտ բառ մը չէի ըսած աղջնակին, երբեք ձեռքը չէի սեղմած... Չէի համարձակած...: Բայց արդիւնուած ընթերցումներու գաղանիքներու իրարու այս վստահումը, այս խորունկ նայուածքները որոնք փոխանակուած էին կրակին տարտամ լոյսովը, ինծի կ'ազդէին փափուկ յոյզ մը, փափուկ ու տաք մեղկութիւն մը... Իմ սիրտս կը վառէր լուիկ, ինչպէս վառարանին կոճղերը՝ իրենց մոխիրը ճերմակ խաւերուն մէջ...:

Ու այսպէս է որ ես սիրահար եղայ:

ԱՆՏՐԷ ԹԵՂՈՒԻԷ

Լրագրական անխորհրդապահութիւններ կան որոնք հաճոյք կը պատճառեն: Այսպէս, ընդհանուր հետաքրքրութեան մը գոնացում տուաւ այն յայտնութիւնը, թէ Բարոզի Մըրցում հաստատող դրասէր հուիրատուն էր Յովհաննէս Էֆ. Թալշանճեան, Նիւ-Եօրք հաստատուած Պոլսեցի ծանօթ վաճառականը, որ ամէն աւթիւ կ'օժանդակէ արդէն Պատրիարքարանի կողմէ ներկայացուած մարդասիրական պէտքերու, — Հիւանդանոցին, Գալֆայեան Որբանոցին, Նպաստամատոյց դործին, և այլն: Այս անգամ, խնդրուած նըպաստ մը չէ որ կ'ընէ Թալշանճեան Էֆ. Էս, այլ բոլորովին ինքնատիպ յղացումով մը՝ կրօնային-գրական մրցանակ մը կը հաստատէ, 75 օսմ. ոսկիի գումար մը ղնելով Ս. Պատրիարքին տրամադրութեան ներքեւ, բաց ի այն տպագրական ծախքէն զոր յանձն կ'առնուէ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել տալու համար մրցանակի արժանի դատուելիք գրաւոր քարոզները: Այս նորութեան օգուտը ու առաւելութիւնը հո՛ն է որ, փոխանակ յաւիտեանական քննադատութեան յանկերգը կրկնելու՝ մեր կարգ մը քարոզիչներու բեմբասացութեանը դէմ, աւելի կ'ընծայուի անոնց՝ ինքնամիփոփուելու ու բարելաւուելու. յոռին ձաղկուելու տեղ՝ լաւը կը քաջալերուի ու կը գնահատուի:

Օրմանեան Ս. Պատրիարքը և Տ. Եղիշէ եպիսկ. Դուբեան, որոնք՝ իբրեւ գլխաւոր քննիչներն այս մրցման՝ չալտի մասնակցին անոր, մտադիր են՝ իբրեւ համակրական արտայայտութիւն մը իրենց կողմէ այս գեղեցիկ գործին՝ մրցանակաբաշխութենէն ետքը իրենք ալ մէյմէկ քարոզ գրի առնել ու գետեղել հրատարակելի հատորին մէջ:

Կը գանգատինք երբեմն թէ ժամանակակից բարքերը Գրականութեան մեկնեամբներ չեն տար մեզի: Երկուստարդ ու աղնուասիրտ վաճառականը, որ նախաձեռնութիւնը կու նկնայ այս մրցումին ու անոր յաջորդելիք հրատարակութեանը, անուղղապէս կը հառօ

տատէ թէ դրասիրութենէ հաճոյք զգացողներ ունինք տակաւին առեւտրական ու սննդանւորական աշխարհին պատկանող մեր ունեւոր դասակարգին մէջ: Երեւոյթը մխիթարական է:

«ԲԻՒՋԱՆԳԻՈՆ»Ի ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԿԱՆԵՐԸ

Հաճոյքով կը ծանուցանենք թէ մեր յարգելի պաշտօնակիցը, Բիւզանդէֆ. Քէչեան, որ երէկ հրատարակեց իր թերթին 2000րդ թիւը, այս բարեղէպ առիթը կը տօնէ «Երկհազարթուեակ»ի մը հրատարակութեամբ, — այսօրուան բացառիկ թիւը, — որ մասնաւորապէս ճոխ ու շահեկան բովանդակութիւն մը պիտի ունենայ՝ գրական յօդուածներով, ուսումնասիրութիւններով, բանաստեղծական գրութեան քննարկով, ամէնքն ալ ծանօթ գրիչներու արտադրութիւն:

Տանսամեակները կամ քսանամեակները, հազար կամ երկհազար — թուեակները, լրագրական ասպարէզին մէջ, կայաններ կամ հանգրուաններ են ուր վայրկեան մը կանգ կ'առնու թերթի մը վարիչը, դիտելու համար ճամբան զոր կտրած անցած է և մտաւորական աշխատութիւնը զոր կատարած է այդ միջոցին, նոր եռանդով ու աշխուժով շարունակելու համար: Բիւզանդիոնի Տնօրէն-Խմբագրապետը, նոյնքան փորձ հրապարակագիր որքան գործնական մտքի տէր անձ, այս յետահայեաց անկարկէն գոհունակ տպաւորութիւն մը միայն պիտի կրէ, և տարակոյս չունինք որ լրագրական շրջանակի մէջ իր պատուան սարքած հանդէսը, — գրչի հանդէս մը, — նորանոր յաջողութիւններ պիտի պատհովէ իրեն, յառաջիկային համար ալ:

Ջերմապէս կը խնդակցինք մեր վաղածանօթ պաշտօնակցին հրապարակագրի գործունէութեան այս բերկրաւթ տօնին, բարեկամական անկեղծ մաղթանքներով ու շնորհաւորութիւններով:

ԿԻՒԼԻԿԱՆ ԲԱՆԿԱՆԵՐԸ

Կիւլիկոյ Ս. Կաթողիկոսին օծման մեծաշուք արարողութիւնը կը կատարուի վաղը՝ Աշխարհամատրան կիրակի, Սիսի տաճարին մէջ:

Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոս՝ իր Աթոռը հասած վայրկեանէն՝ առանց սպասելու այդ

կրօնային հանդիսաւոր նուիրադործմանը, իսկոյն ձեռնարկեց Մայրավանքին լքուած ու թափուր վիճակը դարմանելու. իր առաջին հոգածութեան առարկան ըրաւ երմտական կացութեան ճշգումը, ժողովներու կազմակերպութիւնը, դանձարանին ու թանգարանին մէջ գտնուած եկեղեցական և գրեհական առարկաներու, — ոսկեղէն ու արծաթեղէն անօթներ, շուրջաւ, խաչ, դաւաղան և այլն, ինչպէս նաեւ ձեռագիր ու տպագիր հատորներ, — ցուցակագրութիւնը: Նոյնպէս, վարժարան, եկեղեցական երգեցողութիւնք, միաբանական մատակարարութիւն, Ն. Սրբազնութեան ուշադրութեան առարկայ դարձան անմիջական կերպով: Կիւլիկոյ ժողովուրդը՝ տեսնելով կամ լսելով նորընտիր Հովուապետին այս գործունէութիւնը, անհուն բերկրութեան մէջ է, և իրաւամբ, ու կ'անկալէ ամբողջ թեմերուն եկեղեցական ու կրթական գործերուն հետզհետէ բարւոյն մանր ու զարգացմանը: Ս. Կաթողիկոսը, Երուսաղեմի մէջ, Լուսարարապետութեան հետ վարած է նաեւ ժառանգաւորաց վարժարանի տեսչութիւն, և նոյնքան նախանձախնդիր է եկեղեցական կարգուսարքերու՝ որքան ձեռնասփոյթութեան գործին. աշխատութիւնը որ կը ներկայանայ իրեն՝ ծանր է և բազմաճիւղ. բայց Ամեն. Սահակ Սրբազանը մօտէն ճանչցողները դիտեն թէ՛ իր պարտականութեան գիտակից ու անճնուէր այդ եկեղեցականը յոգնիլ չգիտեր: Կայս. Կառավարութեան կողմէ իրեն նկատմամբ ցոյց տրուած վստահութիւնը եւ ազգին համակրանքը միակ զօրավիզն են Ն. Սրբազնութեան, ինչպէս քանիցս յայտարարեց իր ուղեւորութեան միջոցին, Երուսաղեմէն մինչեւ Սիւս, ամէն մէկ կայքին ու ամէն ընդունելութեանց առթիւ:

Օծումէն ետքը՝ Կիւլիկոյ Ս. Կաթողիկոսը մայրաքաղաքս պիտի դայ, իր հաւատարմական ու երայասագիտական զգացմանց հաւատարմքը մատուցանելու յոտս Կայս. Գահոյից:

Երուսաղեմի նորընտիր Լուսարարապետ Տ. Գաբրիէլ Վրդ. Մնոյեան իր պաշտօնին գլուխը անցեր է արդէն, ինչպէս հաղորդե-

ցին օրաթերթերը, բանալիներու յանձնումը կատարուելով աւանդական արարողութեամբ մը որ կը կատարուի Գլխադրի տաճարին մէջ: Ծանուցուեցաւ նաեւ այս առթիւ թէ նորըն- պիւր լուսարարապետը սիրալիր տեսակցութիւն մը ունեցեր է Ելեւմտից Տեսուչ Տ. Ղեւոնդ վրդ. Մաքսուտեանի հետ և թէ համակիր ընդունելութիւն մը գտեր է Տ. Յարութիւն Ս. Պատրիարքէն: Երուսաղեմէն հասած այս արձագանգներէն կրնանք հետեւցնել թէ Միաբանական վէճերուն վերջին հետքերն ալ անհետացած են, և թէ Վանքին Տնօրէն Խորհուրդը՝ որուն կ'անդամակցի նաեւ Լուսարարապետը՝ Տ. Ղեւոնդ Վ. ի ատենապետութեան ներքեւ կը շարունակէ նոր եռանդով մը վա- րել Ս. Յակոբեանց դարաւոր հաստատու- թեան բազմաճիւղ գործերը որոնք կարող և վստահելի ձեռքերու մէջ կը գտնուին, ալե- զարդ Պատրիարքին հովանաւորութեան ներ- քեւ:

Վիեննայի Մխիթարեան միաբանութեան Աբբաճայրի Տեղակալ անուանուած է, Լէոն ԺԳ. Պապին որոշումով, Հ. Թադէոս Թո- ուռնեան, վեց տարուան չրջանի մը համար: —Նոյն միաբանութեան բազմաշխատ ան- դամներէն Հ. Նելլէէ վրդ. Գաֆթանեանի քահանայութեան յիսնամեայ յոբելեանը պիտի կատարուի մօտ օրերս, Բանկալթիի Մխի- թարեան վանատան մէջ:

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Բերայի վարժարանին ուսուցիչներէն Գարե- ղին էֆ. Ոսկանեանի քառօրդ դարու ուսուց- չութեան յոբելեանը տօնուեցաւ կիրակի օրը, այդ հաստատութեան մէջ, կրթական համեստ ու գեղեցիկ հանդէսով մը: Առաջին անգամն է որ Հայ Հռոմէական հասարակութեան մէջ ուսուցչական յոբելեան մը կատարուի:

Ողբացեալ Աղամեանի մահուան տաս- նամեակին առթիւ հոգեհանգիստ կատարուեր է Նախիջևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ, և գիշերը թատերական երեկոյթ մը տրուեր է՝ բեմին մէջտեղ դրուելով Աղամ- եանի կրտսերներ: Տիկին Սիրանոյշ և Տիկին Հրաչեայ՝ բեմական նախկին ընկերուհիները ողբացեալ արուեստագէտին՝ մասնակցեր են այս ներկայացման, ի պատիւ անոր յիշատա- կին:

Մահչաքըրէն Արամ էֆ. Դարակէօղեան 200 ոսկի նուիրած էր Խառօղի Դալֆայեան Որբանոցին: Այդ հաստատութեան սանուհի- ները՝ ի նշան իրենց երախտագիտութեան՝ մեծաքանակ ձեռագործ գեղեցիկ շրջանակ մը պատրաստելով, նուիրատուին խրկիւր են:

Պատրիարքարանէն գրուած էր Աղեքսան- դրիա՝ Պօղոս փաշա Նուպարի, թէ տեղւոյն կրթական և թաղային գործերուն մէջ իր ներ- կայութիւնը անհրաժեշտ դատուած ըլլալով՝ փախագելի է որ մնայ տեղւոյն Թաղ. Խոր- հուրդին մէջ և վարէ ատենապետութիւնը: Պօղոս փաշա պատասխանած է թէ, հակառակ իր բաղձանքին, չպիտի կրնայ ստանձնել այդ պաշտօնը, վասն զի իր հիւանդագին վիճա- կին պատճառով՝ տարուան մեծ մասը Եւրո- պայի մէջ անցընելու հարկադրուած է:

Ս. Հայրապետք իմանալով Կեսարիոյ ա- ռաջնորդին հիւանդութիւնը, հեռագրաւ պատուիրած է որ Տ. Հմայեակ եպիսկ. Դի- մաքսեան Մայր Աթոռի ներկայացուցիչն ըլ- լայ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին օժման հան- դէսին առթիւ: Բայց հեռագրական պատուէրն ուշ հասած ըլլալով, Հմայեակ Սրբազան պա- տասխանեց թէ նիւթապէս անհնար է ժամա- նակին Սիւս գտնուիլ: Հետեւաբար, Պատրի- արքարանի պատուիրակ Տ. Մովսէս եպիսկ. Կէօմրիւքճեանին պիտի վիճակի՝ միանգամայն Մայր Աթոռի ներկայացուցիչն ըլլալ, եթէ ըստ այնմ հեռագրուի իրեն՝ Ս. Հայրապետին կողմէ:

Ուսումն. Խորհուրդը հրատարակած է Պոլ- տոյ թաղային 40 վարժարաններուն 1903 յոշնուար 1ի վիճակացոյցը, ուսկից կը տես- նուի որ մինչ 1902 տարեշրջանին 2018 աշա- կերտ կար այդ վարժարաններուն մէջ, այս տարուան սկիզբը 1857ի իջած է անոնց թիւը: Աշակերտուհիներուն թիւը, ընդհակառակը, 1223էն բարձրացած է 1261ի:

ԳՐԱԿԱՆ ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Պէրութէն, գրասէր աղգային մը, մէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեց տեղւոյն երկսեռ վարժարանին:

ՄԵՐ ԳԱԽԱՌԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մասիսի այն գաւառային բաժանորդներէն, որոնց գտնուած քաղքին մէջ գործակալ չունինք, ստիպողաբար կը խնդրենք որ հաճին իրենց բաժանորդագիրը ուղղակի խումբագրութեանս ղրկել՝ մանտա-բօսթով կամ նամակադրոյմով։ Արդէն իսկ ներկայ տարեշրջանի կրդ ամսուան վերջին հասած ենք և իրաւունք ունինք սպասելու որ մեր հեռաբանակ ընթերցողները, — հին թէ նոր բաժանորդ, — որոնք փափագած են Մասիս ստանալ ու կանոնաորապէս կը ստանան 1903 յունուարի սկիզբէն, այլեւս փութան հասուցանել իրենց պարտքը որ 50 դր՝ համեստ գումարին մէջ կը սահմանափակուի։

Կը յուսանք որ մեր այս հրաւերը անհետեւանք չպիտի մնայ և մինչև մայիսի սկիզբը պիտի ստանանք այդ կարգի անվճար բաժանորդագիրները, Մասիսի նամակատուփին միջոցաւ իւրաքանչիւրին անուանական կերպով երկրորդ հրաւեր մը ուղղելու և թերթին առաքումը դադարեցնելու հարկին մէջ չի գտնուելու համար։

— Սամսոնի մեր բաժանորդներէն անոնց որոնք տակաւին մեղի չեն հասուցած իրենց բաժանորդագիրը (հակառակ իւրաքանչիւրին ընկալագիրը առանձին նամակով կանխաւ զրկուած ըլլալուն) կը ծանուցանենք թէ այդ քաղքին մէջ Մասիսի գործակալութիւնը ստանձնած է Միհրան Էֆ. Հէօքէլէկեան (Ն. Իփէքեան Վաճառատուն) և կը խնդրենք որ փութան յիշեալին յանձնել իրենց պարտքը։

— Ինչպէս նախորդ շրջաններուն, այս տարի ևս հետեւեալ քաղաքներուն մէջ մեր գործակալներն են. Ատաբազար՝ Ստեփան Էֆ. Սարիբէկեան, Նիկիմիդիա՝ Խաչիկ Էֆ. Աճէմեան, Մարզուան՝ Աւետիս Էֆ. Կիւլ-պէնկեան։ Հետեւաբար կը հրաւիրենք այդ քաղաքներու Մասիսի բաժանորդները որ հաճին յիշեալներուն յանձնել իրենց բաժանորդագիրը և ստանալ ընկալագիրը։

— 1901 և 1902 տարեշրջաններու Մասիսի հաւաքածուներուն ամբողջացման համար՝ պակաս թիւերու խնդրանքը այնչափ չատ է

որ ամբողջին փոխարժէքը կարեւոր գումարի մը կը հասնի։ Կը ջաւինք, հետեւաբար, որ չպիտի կրնանք ձրիաբար գոհացում տալ եղած խնդրանքներուն։ Արդէն, թերթին ճակատը կը կարգացուի սա յայտարարութիւնը — «Այն բաժանորդները որոնք պակաս թերթ ստացած են՝ պէտք է խօսոյն իմացնեն Խմբագրութեան։ Ժամանակ անցնելէ վերջ, այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր»։

Այսու հանդերձ, գոհացում տալու համար մեր վաղեմի բաժանորդներուն, կը ծանուցանենք իրենց թէ հին թերթերը կրնան ստանալ՝ խնդրուած իւրաքանչիւր թիւի համար 40 փարայի բոլ ներփակելով նամակին մէջ և որոշապէս նշանակելով տարեշրջանը ու թիւը։ Առաքման ծախքը Խմբագրութիւնը ինք կը ստանձնէ։

Մեր յաւակցութիւնները կը յայտնենք Տպագրական Տեսչութեան քննիչներէն Արիկ Էֆ. Ոսկեմասնի՝ Տիկին Հօթթանա Ոսկեմասնի մահուան առթիւ, որուն յուղարկաւորութիւնը կատարուեցաւ հիւղչարթի առաջօր, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, Տ. Հմայեակ եպիսկոպոսի նախագահութեամբ։

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց

(Վկայեալ Բաքուէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարելագործեալ գրութիւններով։

Բարիզի, Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էքսքերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ. Պոլիս եկած ևս հաստատուած է Բերա, Թարլա Պաշը, Թիւ 136։

Ծանօթ. — Հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, Ժամը 1-4 (Լ. Ե.)։ Երեքշաբթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները։

12—20

Արժօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

"AU TALON D'OR," O ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ
ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կայաքա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան
համաձայն կօշիկներու յանձնարարութեան
համար,—մանաւանդ չափու վրայ չինուե-
լիք,—կ'արժէ անդամ մը այցելել սոյն վա-
ճառատունը:

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՅԱՆՉՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից,
սպազրական գործերու պատրաստութեան
հոգը.

Գին ԴԻԴՐԱՄԱՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Ծանօթ վաճառականաց, ապառիկ.


Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն

մասամբ:

Մանրամասնութեանց համար գիմել

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սւննայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, բախ ու սափի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն ՍԻՆԿԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վաճա-
ռատանց մէջ՝

ՀԱՐԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ՏԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի գէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին գէմ.

ԿՍԼԱՐԱ

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊԱԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՏԱՐ

Չաբչը Պօյու, Թ. 120.

Դպետը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԻՒՆԻՕՆ Ապահովագրական Ընկերութեան
Տնօրէնութիւնը 1/14 մարտէն սկսեալ իր
գրասենեակները փոխադրած է Պոլիս, Սուլ-
թան Համամ նորայէն Բաթրը՝ Օլլու
Բասաժը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՅ, Թ. 200
ԿԱԼԱԹԱ-ՍԵՐԱՅԻ ԼԻՍԷՆ ԴԷՄ

Դե. Եւ. Շք. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂
Բե. Դե. Ուր. օրերը 6են մինչեւ 11¹/₂
Կիրակի օրերը ժամագրութեամբ



ՅՈՎՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ
Պարսկական Վարժարանին
Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61
Զրահեան արաւքման

Պալպալեան ամէն օր ակռայի ամէն տե-
սակ հիւանդութիւններով տառապողները
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներք-
շաբթի մինչեւ ժամը 5: Դիշերուան ո եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակռա-
ները: Յորեկները ակռայ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կամքէն կախեալ է:

Աղփասներուն օրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ.

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

ԿԵՆԱՅ ԶԻՒՂ.

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաւխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒ-

ԹԵԱՆ ԳՈՎ:
Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպատաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի
ապահովագրուողը ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրթիւններէն, որոնց
կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւգուման (accumulation
des b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեւմբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան դրամասունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԻՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏԵՐԷՆՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրըն օղլու

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ